ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ
2025-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(ՆԱԽԱԳԻԾ)

ԳԱՎԱՌ – 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. էջ 3

2.ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ էջ 4

3. ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ: ԹԻՐԱԽՆԵՐԸ:ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՈՒՆԸ: էջ 5–11

4. ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ: ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿՈՂՄԵՐԸ: ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ: ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻԳ: ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ էջ 11–18

5. ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՀԱՎԵԼՎԱԾ 1) էջ 18–23

Սույն Քաղաքականության մշակման գործընթացին տրամադրվել է փորձագիտական աջակցություն «Գործուն քաղաքացիական հասարակություն» ծրագրի կողմից, որը ֆինանսավորվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից, և իրականացվում Քաունթերփարթ Ինթերնեշնլի կողմից՝ Ուրբան կայուն զարգացման հիմնադրամի հետ համատեղ:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի 2025–2029 թթ.–երի երիտասարդական քաղաքականությունը (այսուհետ՝ Քաղաքականություն) կազմված է երեք առանցքային բաժիններից.

Առաջին բաժինը ներառում է Քաղաքականության հիմնական նպատակը և թիրախները, համայնքի երիտասարդության վիճակի նկարագրությունը՝ հիմնված Գավառ համայնքի Գավառ, Ծովազարդ, Լճափ, Բերդկունք, Հայրավանք, Նորատուս, Կարմիրգյուղ, Գանձակ, Սարուխան, Լանջաղբյուր, Գեղարքունիք և Ծաղկաշեն բնակավայրերի երիտասարդների հետ՝ նրանց կարիքների ու ակնկալիքների վերաբերյալ առցանց հարցման վերլուծության վրա:

Երկրորդ բաժինը ներառում է Քաղաքականության հիմնական ուղղությունները՝ ըստ երիտասարդության կարիքների և խնդիրների, Քաղաքականության սուբյեկտների նկարագրությունը: Քաղաքականության սկզբունքները: Ֆինանսավորման աղբյուրները: Գմահատում և մոնիթորինգ: Քաղաքականության հանրայնացում և հաղորդակցություն :

Երրորդ բաժինը ներառում է Քաղաքականության իրականացման գործողությունների պլանի համառոտ նկարագրությունը, որը բովանդակում է առաջադրված նպատակներին հասնելուն ուղղված միջոցառումները, ժամանակացույցը, պատասխանատու և համագործակցող կառույցների, իրականացման ժամկետների և ֆինանսավորման եղանակների ու ռեսուրսներ նկարագրերը, մշտադիտարկման և գնահատման չափորոշիչներն ու ցուցիչները, հանրահռչակման և հաղորդակցության ուղիները (Գործողությունների պլանի ՀԱՎԵԼՎԱԾ 1):

Օգտագործվող եզրույթներ.

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի 2025–2029 թթ.–երի Երիտասարդական քաղաքականության շրջանակներում օգտագործվում են հետևյալ եզրույթները.

- **Երիտասարդական աշխատանք՝** ընդգրկուն եզրույթ, որը նկարագրում է կրթական, մշակութային, բնապահպանական կամ սոցիալական այլ նշանակության խմբային կամ անհատական աշխատանք երիտասարդների համար, նրանց հետ և/կամ նրանց կողմից, իրականացվում է մասնագետի՝ երիտասարդական աշխատողի կողմից, հիմնված է ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանության և երիտասարդների կամավորական մասնակցության վրա: Երիտասարդական աշխատանքն իր բնույթով երիտասարդների ներուժի բացահայտմանը, իրացմանը, հանրային կյանքի որոշումներին ակտիվ մասնակցությանը և ներառմանը միտված սոցիալական գործունեություն է:
- **Երիտասարդական քաղաքականություն՝** տեղական ինքնակառավարման մարմինների պարտավորությունների և գործողությունների ամբողջություն՝ ուղղված երիտասարդների հիմնախնդիրների վերհանմանը, լուծմանն ու հետաքրքրությունների բավարարմանը, որպես երջանիկ անհատ, իրավագիտակից, պատասխանատու և պետականակիր քաղաքացու ձևավորմանն ու կայացմանը:
- **Երիտասարդական հետազոտություն՝** քանակական ու որակական տվյալների հետ աշխատանքի ու վերլուծման բազմամասնագիտական ոլորտ, որն ուղղված է երիտասարդներին առնչվող տարբեր հարցերի ու կարիքների ուսումնասիրմանը՝(անհատական զարգացում, կյանքի շրջափուլ, կրթություն, մասնակցություն, զբաղվածություն և այլն) առցանց կամ դեմ առ դեմ գրավոր ու բանավոր հարցումների, հարցազրույցների, ֆոկուս խմբային քննարկումների, փաստաթղթերի վերլուծության ու այլ ձևաչափերի միջոցով:
- **Երիտասարդական ոլորտի դերակատարներ կամ շահագրգիռ կողմեր՝** ընդհանրական եզրույթ, որը ներառում է (բայց չի սահմանափակվում) երիտասարդներին, երիտասարդական քաղաքականություն մշակողներին և իրականացնողներին համայնքային մակարդակներում, երիտասարդական քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, երիտասարդական աշխատողներին և հետազոտողներին, ինչպես նաև երիտասարդների հետ աշխատող կամ այդ ուղղությամբ ռեսուրսներ ուղղորդող միջազգային միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպություններին:
- **Երիտասարդական էկոհամակարգ՝** ներառում է երիտասարդական ոլորտի քաղաքականությունը, կառույցները, նրանց միջև փոխհարաբերությունները և գործընթացները:

Առաջին բաժին.

Երիտասարդական քաղաքականության մշակման համար հիմք են հանդիսացել հետևյալ փաստաթղթերը և իրավական ակտերը.

- ՀՀ Կառավարության ծրագիր–2021-2026 թթ (Հավելված ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363 - Ա որոշման)[1]
- ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի 2024–2026 թթ.–երի միջնաժամկետ ծախսերի ծրագիր (բաժին՝ Զարգացման հիմնական ուղղությունները և սկզբունքները. կետ 6. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով բնակիչների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը)[2]
- ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի հնգամյա զարգացման ծրագիր–2022–2026 թթ.[3]
- ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի երիտասարդական ոլորտի զարգացման 2024 թ.գործողության պլանը հաստատելու մասին թիվ 334–Ա որոշման քաղվածք (ավագանու նիստ N 11)[4]
- ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի երիտասարդական ոլորտի զարգացման գործողությունների պլան–2023 թ.: [5]

Քաղաքականության մշակման պահին ՀՀ Կառավարությունը հավանության է արժանացրել «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ ներկայացված ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից: Օրենքի նախագիծը նաև շրջանառվում է հանրային քննարկման նպատակով: Օրենքի համապատասխան դրույթներ ևս կարող են հանդիսանալ Քաղաքականության մշակման հիմք, սակայն, քանի որ այն դեռևս ՀՀ Ազգային ժողովի կողմից չի ընդունվել և ստորագրվել ՀՀ Նախագահի կողմից, հետևաբար չի համարվում ուժի մեջ մտած ոլորտային օրենսդրական ակտ, ուստի տվյալ պահին սույն օրենքի նախագծին հիմնական հղում չի կատարվել Քաղաքականության մշակման համար, բացառությամբ որոշ ձևակերպումների (օրինակ, երիտասարդի տարիք, Քաղաքականության սկզբունքներ, ևն): Քաղաքականությունը կարող է լրամշակվել նաև հետագայում՝ հիմնվելով համապետական օրենսդրությունից կամ տեղական նշանակության իրավական ակտերից բխող պահանջների կամ ոչ պարտադիր կատարման դրույթների վրա:

Երիտասարդական քաղաքականության նպատակը.

Քաղաքականությունը ամրագրում է Գավառ համայնքի երիտասարդությանն առնչվող հիմնահարցերի հաղթահարմանն հասցեագրված գործունեության գերակայությունները՝ առաջադրելով փաստարկված և իրատեսական լուծումներ:

Սույն Քաղաքականությունը թիրախ համայնքում տարվող տեղական քաղաքականության մաս կարող է կազմել՝ ընդգծելով դրա առանձնահատուկ նշանակությունը երիտասարդների քաղաքացիական,

[1] https://www.gov.am/files/docs/4586.pdf
[2] https://gavarihamayngapetaran.am/upload/DocFlow/Projects/Mo243181724100185_2024-2026.pdf
[3] https://gavarihamayngapetaran.am/upload/DocFlow/Projects/Fr225201227095185_2022-2026.pdf
[4] https://gavarihamayngapetaran.am/upload/DocFlow/Projects/We2312271428457185_.pdf
[5] https://gavarihamayngapetaran.am/upload/DocFlow/Projects/We2312271428457185_2024.pdf

բազմակողմանի զարգացման ու համայնքային կառավարման մակարդակներում նրանց մասնակցայնության ապահովման համար:

Քաղաքականության նպատակն է ապահովել իրավական հենք Գավառ համայնքի երիտասարդության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իր լիազորությունների շրջանակում պլանավորված անհրաժեշտ միջոցառումներ և այլ գործառույթներ իրականացնելու համար, ստեղծել այնպիսի միջավայր, որում յուրաքանչյուր երիտասարդ ունի ինքնադրսևորվելու, անձնական ներուժը գործածելու և նոր արժեք ու բարիք ստեղծելու լայն հնարավորություն:

Քաղաքականությունն ուրվագծում է տեղական ինքնակառավարման մարմինների պարտավորությունների և գործողությունների ամբողջությունը՝ միտված երիտասարդների հիմնախնդիրների բացահայտմանը, լուծումներ առաջադրելուն ու այլ կարիքներին արձագանքելուն՝ ինքնաբավ, ինքնադրսևորված, պատասխանատու, համայնքի հանդեպ սեփականության զգացում կրող քաղաքացի ձևավորելու հեռանկարով:

Մասնավորապես, Քաղաքականությունը ենթադրում է հետևյալ ենթանպատակներին ուղղված ջանքերի մշակում և իրականացում՝ տվյալ ժամանակահատվածի համար առաջնահերթություններից և առկա ռեսուրսներից ելնելով.

- Նպաստել երիտասարդների մասնագիտական, անձնական աճի, հասարակական դերի բարձրացմանն ու բազմակողմանի և առողջ զարգացմանը՝ կրթական, երիտասարդական փոխկապակցման, ներառական ծրագրերի ու քաղաքացիական ներգրավվման նախաձեռնությունների միջոցով:
- Օժանդակել նրանց ստեղծագործական, ձեռնարկատիրական ու այլ կենսական ունակությունների ձեռքբերմանն ու կիրառմանը՝ հիմնվելով առաջնային կարիքների վրա:
- Նպաստել համայնքի երիտասարդների ժողովրդավարական ու քաղաքացիական գիտակցության ձևավորմանը, կարևորել և խրախուսել նրանց ձայնը մասնակցային որոշումների ընդունման բոլոր փուլերում:
- Խթանել երիտասարդների շրջանում հոգևոր–մշակութային և այլ արժեքների պահպանումը:
- Նպաստել համայնքային, մարզային, հանրապետական և միջազգային ասպարեզներում ու հարթակներում երիտասարդների համագործակցությանը, միջմշակութային երկխոսությունը խթանող նախագծերին և նախաձեռնություններին :

Քաղաքականությունը մշակվում և իրականացվում է Գավառ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, երիտասարդական ոչ ֆորմալ խմբերի և այլ շահագրգիռ կառույցների, ինչպես նաև երիտասարդների մասնակցությամբ:

Քաղաքականության թիրախները.

Երիտասարդական քաղաքականության շրջանակներում իրականացվելիք ռազմավարական թիրախները ստորաբաժանվում են երեք խմբի՝

ա. երիտասարդական էկոհամակարգի զարգացում՝ երիտասարդների ներուժի իրացման հնարավորությունների շարունակական ընդլայնման և հանրային կյանքի գործընթացներում երիտասարդների դերակատարության բարձրացման համար:

Երիտասարդական քաղաքականությունը վերաբերում է երիտասարդների լայն խմբերի, այդ թվում՝ կրթությունից և աշխատաշուկայից դուրս գտնվող և որոշակի հնարավորություններից դժվարությամբ օգտվող կամ դրանք չունեցող երիտասարդներին:

բ. Երիտասարդությանն առնչվող ոլորտների միջև համագործակցություն

Միջոլորտային համագործակցության հնարավորությունները և ձևաչափերը բազմազան են: Քաղաքականության շրջանակներում անհրաժեշտ է ընդլայնել գործընկերների շրջանակը և խորացնել համագործակցությունը նրանց հետ: Քաղաքականության գործողությունների պլանում գործընկերների հետ իրականացվող ծրագրերի քանակը անհրաժեշտ է ամրագրել: Համագործակցության կարևոր հնարավորություն է երիտասարդական կառույցներին տրամադրվող դրամաշնորհների գնահատման գործընթացին այլ գործընկեր կառույցների մասնակցությունը: Դա թույլ կտա ներգրավել հարակից ոլորտների փորձագիտությունը ծրագրային հայտերի գնահատման համար և ապահովել ընթացակարգի թափանցիկությունը:

գ. Որոշ հնարավորություններից չօգտվող և խոցելի խմբերում հայտնված երիտասարդների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երիտասարդների ներգրավում

Երիտասարդական քաղաքականության հիմքում առանցքային ներառականության սկզբունքը, որը ենթադրում է հատուկ կարիքներ ունեցող և որոշ կենսական հնարավորություններից զրկված, ինչպես նաև խոցելի շերտերի երիտասարդների հասանելիության ապահովումն իրականացվող ծրագրերին, այնպես էլ թիրախային ծրագրերի իրականացում հենց այդ խմբերի երիտասարդների համար և նրանց կողմից: Արցախյան վերջին պատերազմից հետո ժամանակի հրամայական է պատերազմի մասնակիցների, ինչպես նաև պատերազմից ուղղակիորեն ներազդված երիտասարդների թիրախավորումը, ուղղված նրանց սոցիալական վերաինտեգրմանը, առողջ ապրելակերպի, ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանմանն ու վերականգնմանը, պատերազմում հաշմանդամություն ձեռք բերած երիտասարդներին տնտեսական մասնակցության հնարավորությունների ստեղծմանը և/կամ ընդլայնմանը:

Երիտասարդական քաղաքականության շրջանակներում այդ խմբերի երիտասարդների ներգրավման աշխատանքը ներառում է հետևյալ գործառույթները՝

- սահմանել հավասարության և ներառականության սկզբունքներ Երիտասարդական քաղաքականության բոլոր շահագրգիռ կողմերի համար,
- շեշտադրել երիտասարդների այն խմբերին, որոնց մասնակցության համար անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ աջակցություն,
- պլանավորել նրանց մասնակցության համար անհրաժեշտ աջակցություն՝ յուրաքանչյուր խմբի կարիքներին համապատասխան,

- զարգացնել երիտասարդական քաղաքականություն մշակողների և իրականացնողների կարողությունները այդ խմբերի երիտասարդներին որակյալ ու հասցեական աջակցություն տրամադրելու համար,
- համագործակցել այդ երիտասարդների հետ աշխատող այլ գործընկերների հետ առավել համապարփակ աջակցություն և ավելի մեծ ազդեցություն ստանալու համար,
- շարունակաբար գնահատել և բարձրացնել այդ խմբերի երիտասարդներին տրամադրվող աջակցության որակը:

Երիտասարդական քաղաքականության շրջանակներում այդ խմբերի երիտասարդներն են.

- ✓ հաշմանդամություն ունեցող երիտասարդներ,
- ✓ փախստական, տեղահանված, ապաստան հայցող կամ նմանատիպ կարգավիճակում գտնվող երիտասարդներ,
- ✓ զինվորական ծառայությունից նախորդ 1 տարում զորացրված և ազատամարտիկ երիտասարդներ,
- ✓ պատերազմի մասնակիցներ և պատերազմից անմիջականորեն ներազդված երիտասարդներ,
- ✓ ազգային փոքրամասնություն ներկայացնող երիտասարդներ,
- ✓ գյուղական և/կամ սահմանամերձ/սահմանապահ համայնքներում ու բնակավայրերում բնակվող երիտասարդներ,
- ✓ աղքատ կամ ծայրահեղ աղքատ երիտասարդներ,
- ✓ ներգաղթյալ և հայրենադարձված երիտասարդներ,
- ✓ չսովորող և չաշխատող երիտասարդներ (NEET-)՝ ներառյալ գործազուրկ և տնտեսապես ոչ ակտիվ երիտասարդներ,
- ✓ Կրոնական, էթնիկ, ազգային ու այլ փոքրամասնություններին պատկանող երիտասարդներ
- ✓ սոցիալական պաշտպանության ծառայություններ մատուցող կազմակերպությունների շահառու երիտասարդներ,
- ✓ քրեական պատիժ կրող, պատժից ազատված նախորդ մեկ տարում ազատված և վերահսկողության տակ գտնվող երիտասարդներ,
- ✓ սոցիալական բացառման ենթարկված այլ երիտասարդներ,
- ✓ աշխարհագրական և ենթակառուցվածքային դժվարություններ ունեցող բնակավայրերի երիտասարդներ,
- ✓ բնապահպանական, տեխնոլոգիական և այլ աղետների ազդակիր համայնքների երիտասարդներ:

Գավառ համայնքի երիտասարդության ներկա վիճակի նկարագրությունը.

Համայնքի երիտասարդների ներկա վիճակի նկարագրությունը, որն անշուշտ չի արտացոլում ամբողջական պատկերը, հիմնված է երիտասարդների հետ՝ նրանց կարիքների ու ակնկալիքների վերաբերյալ առցանց հարցման արդյունքների վերլուծության վրա:

Առցանց հարցումն իրականացվել է (իրականացնող՝ «Բլեջան» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի ՀԿ) 2024 թ. Գավառ համայնքի Գավառ, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Սարուխան, Գանձակ, Ծաղկաշեն, Կարմիրգյուղ, Նորատուս, Հայրավանք, Բերդկունք, Լճափ և Ծովազարդ բնակավայրերի 16–30 տարեկան 143 երիտասարդի մասնակցությամբ, որոնք ներկայացնում են տարբեր սոցիալական, տնտեսական և կրթական աստիճան: [6]

Համաձայն վերլուծության արդյունքների, երիտասարդները շեշտել են ֆինանսական անկայունությունը և դրանից բխող մարտահրավերները, առողջության պահպանման հետ կապված հարցերը: Հարցվածների մեծամասնությունը (78,7 %) շեշտել է կապվածությունը համայնքի և հասակակիցների հետ, որը դրական միտում է: Հատկանշական է, որ երիտասարդների 83,6 %–ն սահմանել է հատուկ կրթական ու կարիերայի նպատակներ, իսկ մոտ 17 % –ը համարում է, որ իրենց ներկայիս կրթությունը լիովին չի համապատասխանում ցանկալի մասնագիտական ոլորտի պահաջներին: Երիտասարդները զգալի տեղ են հատկացնում իրենց ինքնազարգացման և առօրյայի կազմակերպման ոլորտներին, նշելով, որ երաժշտությունը, ոչ ֆորմալ կրթությունը, ուսումնական և ճանաչողական արշավները, լուսանկարչությունը իրենց հետաքրքրությունների և նախասիրությունների շրջանակում են: Հետևաբար, ներկայիս կրթության և կարիերայի նպատակների միջև անհամապատասխանությունը և անհամաչափությունը ենթադրում է ճկուն և հարմարվողական կրթական ծրագրերի անհրաժեշտություն:

Իրենց առնչվող խնդիրների ու մտահոգությունների հետ կապված, երիտասարդները շեշտում են զբաղվածության, մասնավորապես համապատասխան աշխատատեղերի բացակայությունը, ինչպես նաև խնդիր է համարվում բնակիչների մոտ որոշ հարցերի հետ կապված կարծրատիպային մտածելակերպը, որից բխում են մի շարք այլ խնդիրներ, օրինակ, գիտակցական ցածր աստիճանը, ժամանցային, գենդերային հիմքով խտրական մոտեցումները, ևն: Այնուամենայնիվ, երիտասարդների մեծամասնությունը ցանկանում է ապրել ու աշխատել իր համայնքում:

Տարբեր ոլորտների վերաբերյալ երիտասարդների կարծիքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երիտասարդների մեծամասնությունը ձգտում է ոչ ֆորմալ կրթական հնարավորություններից օգտվել, ինչն ընդգծում է որակյալ կրթության պահանջմունքների բավարարման առաջնահերթությունը Քաղաքականության մեջ արտացոլելու համար: Առանձնապես ուշադրության է արժանի երիտասարդների ֆինանսական կայունությանն ու մարտահրավերներին դիմակայելու կարողությունների զարգացմանն միտված միջոցառումների և գործնական քայլերի կարևորությունը: Երիտասարդների հաղորդակցման ու առողջ հարաբերությունների կառուցման, սոցիալ–մշակութային միջավայրի զարգացումը ևս առաջնայնություն է դիտարկվում նրանց կողմից, ինչպես

[6] Աղբյուրը՝ https://gavarihamaynqapetaran.am/upload/DocFlow/Projects/We2312271428457185_2024.pdf

նաև առաջնայնություն է համարվում առողջության պահպանման ու առողջությանը անմիջական վնաս պատճառող երևույթների դեմ պայքարը:

Վերը հիշատակված հարցման վերլուծությունից հանգում են հետևյալ եզրակացությունները.

- Կրթությունը, աշխատատեղերի հասանելիությունը և ֆինանսական կայունության աջակցությունը պետք է լինեն ծրագրի կենտրոնում:
- Հոգեկան առողջությունը, առցանց հարթակների միջոցով հաղորդակցությունը և հետաքրքրությունների զարգացումը նույնպես կարևոր ասպեկտներ են, որոնք ուշադրություն են պահանջում:
- Երիտասարդությունը պետք է ակտիվորեն ներգրավված լինի զարգացման գործողությունների պլանի մշակման և իրականացման գործում:
- Հարցման արդյունքների այս վերլուծությունը մեկնարկային կետ է երիտասարդության տեղական զարգացման գործողությունների պլանի մշակման համար, որը նպատակաուղղված կլինի բարելավելու Գավառ համայնքի երիտասարդների կյանքի որակը և հնարավորությունները:

Հաշվի առնելով հարցման վերլուծության նախնական արդյունքները, կարելի է անդրադառնալ հետևյալ Երիտասարդների հետևյալ կարիքներին.

- Աշխատանքի և կարիերայի հնարավորությունների բացակայություն երիտասարդների համար
- Ապագա մասնագիտության ընտրության հարցում անորոշություն և կրթական շուկայի հետ անհամապատասխանություն
- Որակյալ կրթական և վերապատրաստման ծրագրերի հասանելիության բացակայություն,
- Առողջապահության և առողջապահական ծառայությունների սահմանափակ հասանելիություն
- Սոցիալական փոխազդեցության և երիտասարդական գործունեությանն ու ժամանցին մասնակցելու սահմանափակ հնարավորություններ
- Երիտասարդների համար մշակութային և կրթական միջոցառումների բացակայություն
- Անկախ կյանքի սահմանափակ հնարավորություններ
- Սոցիալական մասնակցություն և ներգրավվածություն
- Որոշումների կայացմանը և քաղաքականության մշակմանը երիտասարդների մասնակցության սահմանափակ մեխանիզմներ
- Երիտասարդների շրջանում ստարտափներին և ձեռնարկատերերին աջակցելու համար ֆինանսական ռեսուրսների և ծրագրերի անհասանելիություն
- Մշակութային և ազգային գիտակցություն,
- Ազգային ու մշակութային ինքնության ամրապնդման ու պահպանման անհրաժեշտությունը,
- Ինքնազարգացման և ստեղծագործելու միջավայր
- Ինքնազարգացման, հոբբիների և ստեղծագործելու համար բավարար ռեսուրսներ և վայրեր չկան

Ելնելով վերոգրալից և ընդհանրացնելով երիտասարդների կարիքներին արձագանքելուն միտված բարելավման միջամտությունները, անհրաժեշտ է համարվում մասնակցային ձևաչափով մշակել Քաղաքականության հիմնական գերակայությունները և դրանց ձգտելուն ուղղված տարեկան գործողությունների պլանը (այսուհետ՝ ԳՊ):

<u>Երկրորդ բաժին.</u>

Քաղաքականության հիմնական ուղղությունները՝ ըստ երիտասարդության կարիքների եվ խնդիրների:

Քաղաքականության հիմնական 4 ուղղությունները ձևակերպվել և սահմանվել են համայնքի երիտասարդության կարիքների վերաբերյալ հարցման արդյունքներից և տարբեր ոլորտներում երիտասարդների ներգրավվածությանն ուղղված միջամտությունների անհրաժեշտությունից ելնելով:

<u>ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 1.</u>

Գավառ համայնքի երիտասարդների անձնական և մասնագիտական աճի ապահովում:

<u>ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 2.</u>

Երիտասարդների զբաղվածության ու ձեռնարկատիրական գործունեության խթանում:

<u>ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 3.</u>

Երիտասարդների քաղաքացիական գիտակցության բարձրացում և ձայնի արժևորում, ներգրավվածության ու մասնակցայնության խթանում որոշումների կայացման տարբեր մակարդակներում:

<u>ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 4</u>

Երիտասարդների աջակցության խթանում, կամավորության և ոչ ֆորմալ կրթությամբ զարգացման հնարավորությունների ընդլայնում:

<u>ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 5.</u>

Առողջ, մաքուր և բարեկեցիկ միջավայրի ապահովում՝ երիտասարդների առողջ ապրելակերպի, հոգևոր–մշակութային, սոցիալական ու այլ կարիքների ապահովման համար:

<u>ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 6.</u>

Միջազգային համագործակցություն երիտասարդության ոլորտում:

Քաղաքականության խնդիրները.

- ✓ Նպաստել երիտասարդների շարունակական կրթությանը՝ ոչ ֆորմալ կրթության ծրագրերի ու կամավորական նախաձեռնությունների միջոցով:
- ✓ Խթանել երիտասարդների քաղաքացիական ակտիվությունը և մասնակցությունը համայնքային և մարզային, նաև հանրապետական մակարդակներում ու երկրի սահմաններից դուրս:
- ✓ Նպաստել երիտասարդների զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ մեխանիզմների մշակմանը և ներդրմանը:
- ✓ Խթանել կամավորությունը համայնքում, աջակցել ոչ ֆորմալ կրթական նախաձեռնություններին:
- ✓ Խթանել առողջ ապրելակերպը երիտասարդների շրջանում:
- ✓ Խթանել երիտասարդների ներգարվվածությունը հոգևոր–մշակութային կյանքին, բարձրացնել նրանց իրազեկվածության և պատրաստվածության ու դիմակայության աստիճանը արտակարգ իրավիճակների դեպքում:
- ✓ Խթանել համայնքի երիտասարդների և այլ երկրների երիտասարդների հետ համագործակցությանը, միջմշակութային երկխոսությանը, աջակցել համատեղ ծրագրերի իրականացմանը:

Քաղաքականության սուբյեկտների նկարագրությունը.[7]

Տեղական ինքնակառավարման մարմին՝ հիմնական պատասխանատուն է քաղաքականության մշակման գործընթացի համակարգման, հաստատման և իրականացման համար: Համակարգում է տեղական բյուջեի ռեսուրսները Քաղաքականության գործողությունների պլանով նախատեսված նախագծերի ու ծրագրերի իրագործման, ինչպես նաև այլ ռեսուրսների և գործընկերների ներգրավվման գործողություններն ու ջանքերը:

Երիտասարդ՝ 13–ից 35 տարեկան Հայաստանի Հանրապետության քաղաքացի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող անձ (սահմանման աղբյուրը՝ «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագիծ):

Աշակերտական, ուսանողական, երիտասարդական խորհուրդ՝ կրթական հաստատության, տեղական ինքնակառավարման կառուցվածքում խորհրդատվական կամ որոշումների կայացմանը մասնակցող մարմին, որը, համաձայն իր կանոնադրության, ապահովում է երիտասարդների ինստիտուցիոնալ մասնակցությունը տվյալ մարմնի գործունեության շրջանակներում որոշումների կայացման գործընթացներին:

[7] Որոշ սահմանումների աղբյուրը՝ https://www.e-draft.am/projects/7351/about

Երիտասարդական աշխատող՝ երիտասարդների հետ աշխատող մասնագետ, ով իրականացնում է երիտասարդական աշխատանք, այն է՝ կրթական, մշակութային, բնապահպանական կամ սոցիալական այլ նշանակության խմբային կամ անհատական աշխատանք երիտասարդների համար, նրանց հետ և/կամ նրանց կողմից հիմնված ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանության և երիտասարդների կամավոր մասնակցության վրա: Երիտասարդական աշխատանքն իր բնույթով երիտասարդների ներուժի բացահայտմանը, իրացմանը, հանրային կյանքի տարբեր ոլորտներում և մակարդակներում կայացվող որոշումներին ակտիվ մասնակցությանը և ներառմանը միտված սոցիալական գործունեություն է:

Կրթական, առողջապահական, մշակութային, հոգեվոր ու մարզական կառույցներ՝ դպրոցներ, քոլեջներ, ԲՈՒՀ–եր, մշակութային և մարզական հաստատություններ, կարիերայի կենտրոններ, որոնք ապահովում են երիտասարդների համապատասխան կրթությունը, (ֆորմալ, ոչ ֆորմալ), առողջ ապրելակերպը, մասնագիտական, հոգևոր, մշակութային զարգացումը:

Տեղական բիզնես՝ մասնավոր և շահույթ հետապնդող ձեռնարկատիրական միավորներ, որոնք մասնակցում են երիտասարդների զբաղվածության, ձեռնարկատիրական կարողությունների խթանման գործընթացներին:

Երիտասարդական նախաձեռնող եվ ոչ ֆորմալ խմբեր՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող, երիտասարդների կողմից ինքնակազմակերպված և որոշակի ժամկետում գործունեություն իրականացնող երիտասարդների խումբ:

Տեղական եվ միջազգային հասարակական կազմակերպություններ՝ ոչ կառավարական և շահույթ չհետապնդող կազմակերպություններ, որոնք իրենց առաքելությունների շրջանակում նպաստում են երիտասարդների բազմակողմանի զարգացմանը, երիտասարդական համագործակցային հարթակների ու ցանցերի ստեղծմանը , մասնակցությունը տեղական ու միջազգային տարբեր վերապատրաստման ու փոխանակման ծրագրերում, ինչպես նաև խթանում են երիտասարդների ակտիվ ներգրավվմանը քաղաքացիական, շահերի պաշտպանության, ժողովրդավարության խթանման նախաձեռնություններում՝ համագործակցելով նաև իշխանության մարմինների հետ:

Երիտասարդական կենտրոն՝ ստեղծարար միջավայր, որում իրականացվում է երիտասարդական աշխատանք՝ ուղղված երիտասարդների ներուժի բացահայտմանը, սոցիալականացման, ինքնաիրացման, ներգրավման ու զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, հանրային կյանքին և պետականաշինությանը երիտասարդության առավելագույն մասնակցության ապահովմանը:

Քաղաքականության սկզբունքները.[8]

Սկզբունքները արտացոլում են Քաղաքականության հիմնական էությունն ու նշանակությունը: Սկզբունքները նաև հիմք են ծառայում և գործածելի են Քաղաքականության ԳՊ–ի բովանդակության ձևավորման ու մշակման համար:

[8] Աղբյուրը՝ «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագիծ https://www.e-draft.am/projects/7351/about

Սկզբունքները հետևյալն են.

1) **Իրավունքահեն քաղաքականություն.** երիտասարդական քաղաքականության մշակման ու կիրառման ընթացքում ապահովել երիտասարդի, որպես հիմնական շահակիր անձի, իրավունքների (մասնակցության, մտքի ու խոսքի ազատության, այլ անձանց հետ միավորումներ կազմելու, ևն) իրացումը, իսկայդ իրավունքների իրացմանն աջակցող ու խթանող դիտարկել քաղաքականություն մշակողներին ու իրականացնողներին:
2) **Երիտասարդության՝ որպես համայնքի զարգացման գործում որոշիչ դերի ընկալում.** խթանել կենսաապահովման տարբեր ասպարեզներում ու նախաձեռնություններում, զարգացման ծրագրերում երիտասարդության ներգրավվածությունը:
3) **Երիտասարդության մասնակցություն.** որոշումների ընդունման տարբեր մակարդակներում երիտասարդների/երիտասարդական նախաձեռնող խմբերի մասնակցության կարևորում և ապահովում, հատկապես, երբ որոշումները վերաբերում են նրանց կենսական շահերին:
4) **Փաստահեն երիտասարդական քաղաքականություն.** համայնքի երիտասարդական քաղաքականության և գործողությունների ծրագրերի մշակման ընթացքում ընդգրկուն, համապարփակ և արդիական տվյալների կիրառում, որոնք հավաքագրվում են հետազոտությունների, գնահատումների կամ հարցումների միջոցով:
5) **Համաժամանակեցված երիտասարդական քաղաքականություն.** քաղաքականությունը համաժամանակեցված է ՀՀ Կառավարության 2021–2026 թթ. ծրագրին (մասնավորապես Ծրագրի՝ Գ.4 Մարդկային կապիտալի զարգացում. Կետ. 4.7. Երիտասարդություն[9])՝ հաշվի առնելով հանրապետությունում երիտասարդության ոլորտի ներկա խնդիրները, առաջնահերթությունները և մարտահրավերները: Քաղաքականությունը նաև կհամաժամանակեցվի ՀՀ «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքին (դեռևս՝ նախագիծ)՝ ՀՀ Ազգային Ժողովի կողմից վերջինիս ընդունումից հետո: Քաղաքականությունը նաև կհամաժամանակեցվի Գավառ համայնքի Զարգացման ծրագրի հետ, եթե նրանում կատարվեն լրացումներ երիտասարդությանն առնչվող ծրագրերի պլանավորման ու իրականացման նպատակով: Քաղաքականությունն ուղղորդվում է կոնկրետ սահմանված նպատակներով, և յուրաքանչյուր գործողություն մշակվում է շոշափելի ու ապացուցելի արդյունքների հիման վրա:
6) **Համագործակցություն.** քաղաքականության ու նրա ԳՊ–ի իրականացման գործընթացում պատասխանատու մարմինը և երիտասարդական ոլորտի մյուս գործընկերների միջև գործում է համագործակցություն՝ տարբեր ձևաչափերով:
7) **Չափելիություն.** հստակ սահմանված են Քաղաքականության Երիտասարդական ոլորտի զարգացման ԳՊ–ի իրականացման ընդհանուր ու մասնավոր արդյունքները և այդ արդյունքների չափման ցուցիչները:
8) **Թափանցիկություն եվ հաշվետվողականություն.** համայնքի երիտասարդական քաղաքականության ու նրա ԳՊ–ի մշակման ու իրականացման գործընթացը հրապարակային է ու ապահովվում է հաշվետվողականությունը:
9) **Նորարարություն.** խրախուսվում ու խթանվում է հիմնախնդիրների լուծումների նորարար ու ստեղծարար մոտեցումների գործածումը:

[9] Աղբյուրը՝ ՀՀ Կառավարության 2021–2026 թթ.ծրագիր, էջ 71, https://www.gov.am/files/docs/4586.pdf

10) **Ներառականություն.** առանց անձի որևէ տարբերակիչ հատկանիշի խտրականության հավասար հնարավորությունների ապահովում բոլոր երիտասարդների համար՝ նրանց մասնակցության, զարգացման ու ակտիվ գործունեության համար (ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող անձիք ու այլ խոցելի խմբերի անդամներ, չսովորող և չաշխատող երիտասարդներ (NEET– Not in Education, Employment, or Training)՝ ներառյալ գործազուրկ և տնտեսապես ոչ ակտիվ երիտասարդներ, ազգային ու կրոնական փոքրամասնությունների, այլ մարգինալ խմբերի ներկայացուցիչներ, տեղահանված ու ինտեգրման կարիք ունեցող երիտասարդներ, հեռավոր կամ երիտասարդների զարգացման ենթակառուցվածքներ չունեցող բնակավայրերի բնակիչներ, և այլն):
11) **Հավասարություն.** բոլոր երիտասարդները ունեն Քաղաքականության ԳՊ–ով նախատեսված նախաձեռնությունների իրականացմանը մասնակցության հավասար հնարավորություններ:

Քաղաքականության իրականացնող կողմերը (ինստիտուցիոնալ համակարգումը).

Քաղաքականության հիմնական պատասխանատուն և իրականացնողը Գավառ համայնքի համայնքապետարանն է, իսկ ոլորտի համակարգողը՝ որպես ոլորտային ստորաբաժանում՝ Գավառի համայնքապետարանի կրթության, մշակույթի և սպորտի բաժինը:

Քաղաքականության ինստիտուցիոնալ հենքը բաղկացած է հետևյալ կառույցներից.

- Գավառ համայնքի համայնքապետարան
- Համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհուրդ (իրավասությունների և գործունեության գործառույթների հստակ ու հաստատված ընթացակարգ/կանոնակարգ ունենալուց հետո: Այն կարող է ունենալ նաև Քաղաքականության մշտադիտարկման, ինչպես նաև Քաղաքականության ընթացիկ գործողությունների կամ դրույթների վերանայման ու վերաձևակերպումներ, լուծումներ առաջարկելու գործառույթ)
- Երիտասարդական-քաղաքացիական հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ ՔՀԿ) «անձրևանոց» կառույց կամ ցանց, որը ձևավորվում է անկախ, գործում է ինքնակառավարման սկզբունքով և ապահովում է երիտասարդական ՔՀԿ-ների մասնակցությունը երիտասարդներին առնչվող քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացներում:

Մասնավորապես, տեղական ինքնակառավարման մարմնի իրավասությունների և գործառույթների շրջանակը կարող է կարգավորվել և սույն տեղական երիտասարդական քաղաքականության մեջ արտացոլվել «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի ընդունումից և ուժի մեջ մտնելուց հետո:

Մինչև նշյալ օրենքի ընդունումը և ուժի մեջ մտնելը Քաղաքականության իրականացման շրջանակում տեղական ինքնակառավարման մարմնի իրավասությունների շրջանակը կարելի է սահմանել հետևյալ կերպ.[10]

[10] Նշյալ իրավասությունների շրջանակը պարտադիր չէ և կարող են փոփոխվել կամ լրացվել օրենսդրության շրջանակում:

1) Համագործակից կառույցների ու երիտասարդական ոլորտի դերակատարների ու շահագրգիռ կողմերի հետ մշակել ու հաստատել համայնքի երիտասարդների կարիքներից բխող Քաղաքականություն և դրա իրականացման Գործողությունների պլան՝ որոշակի ժամկետում իրանացնելու նպատակով:
2) Քաղաքականության ԳՊ–ով իրականացվող նախաձեռնությունների ու ծրագրերի, այլ դերակատարերի հետ համագործակցության ու համատեղ աշխատանքի կազմակերպումն ու համակարգումը ապահովելու համար համապատասխան բաժնի համար սահմանել նոր գործառույթներ և հաշվետվողականության ձևաչափեր:
3) Համայնքի Զարգացման ծրագրում և տարեկան բյուջեում ներառել Քաղաքականության ԳՊ–ով նախատեսված ծրագրերի իրականացման համապատասխան ֆինանսական միջոցներ նպատակներին հասնելու համար, ինչպես նաև որոնել ֆինանսավորման նոր ռեսուրսներ՝ համագործակցելով դոնոր կազմակերպությունների, տեղական գործարար շրջանակների հետ:
4) Տարբեր ձևաչափերով օժանդակել տեղական երիտասարդական նախաձեռնություններին:
5) Համայնքի ղեկավարին կից Կանանց և երիտասարդների խորհրդի՝ որպես խորհրդակցական մարմնի իրավասությունների շրջանակի սահմանում՝ Քաղաքականությունից բխող որոշակի գործողություններում Խորհրդի մասնագիտական ու խոհրդատվական միջամտությունները ապահովելու համար:

Քաղաքականության իրականացման գործընթացում համայնքապետարանը համագործակցում է տեղական այլ շահագրգիռ պետական ու ոչ պետական կառույցների (այդ թվում մարզային ու հանրապետական կառավարման՝ մարզպետարան, նախարարություններ, այլ գերատեսչություններ), միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների, երիտասարդական կենտրոնների ու նախաձեռնող խմբերի հետ՝ զարգացնելով ու ամրապնդելով գործընկերային հարաբերությունները և ընդլայնելով համատեղ նախագծերի իրագործման հնարավորությունները:

Ֆինանսավորման աղբյուրներ.

Քաղաքականության շրջանակներում ԳՊ–ով նախատեսված գործողությունները ֆինանսավորվում են Գավառ խոշորացված համայնքի բյուջեի հաշվին, ինչպես նաև միջազգային դոնորների, տեսական հասարակական կազմակերպությունների և մասնավոր ներդրումների ներգրավմամբ: Բյուջետային հատկացումները հաշվետու տարում կայուն ապահովելու համար անհրաժեշտություն կդիտարկվի համայնքի Զարգացման ծրագրում Քաղաքականության իրագործման վերաբերյալ համապատասխան կետերի ներառումը:

Համայնքապետարանը երիտասարդական ծրագրերի իրականացման համար ֆինանսավորումը պետք է ուղղի՝

1. Համայնքապետարանի կողմից իրականացվող Քաղաքականության ԳՊ–ի երիտասարդական նախաձեռնություններին, միոցառումներին ու ծրագրերին,
2. Համայնքի տեղական երիտասարդական հասարակական կազմակերպությունների, կրթական հաստատությունների ու երիտասարդների նախաձեռնող ոչ ֆորմալ խմբերի կողմից իրականացվող ծրագրերին, որոնք նախանշվան են Քաղաքականության ԳՊ–ով որպես արտապատվիրակվող նախաձեռնություններ կամ ուղղակի իրականացվում են համայնքապետարանի հետ համատեղ:

Ֆինանսավորում ստացած կազմակերպությունները և միավորները հաշվետու են համայնքապետարանին՝ ծրագրերի ֆինանսական ծախսերի և իրականացված ծրագրերի արդյունքների համար: Հաշվետվության փաստաթղթավորումը և ներկայացման ձևաչափը որոշվում է համապատասխան վարչարարական կարգով կամ որոշմամբ, կամ՝ հաշվետվության փաթեթի անհրաժեշտ ու մատչելի ձևաչափի շուրջ համայնքապետարանի ու համագործակից կառույցների համատեղ համաձայնությամբ:

Երիտասարդական քաղաքականության իրականացման ֆինանսավորման ճկուն մեխանիզմ կարող է լինել համայնքի տարեկան բյուջեում գումարի որոշակի տոկոսային հատկացում սահմանելը (օր. 0,5 կամ 1%)՝ ըստ մշակված ԳՊ–ի: *(Առաջարկը՝ «Բայազետ» վերլուծական–հետազոտական կենտրոնի)*

Գնահատում եվ մոնիթորինգ.

Քաղաքականության մոնիթորինգի և գնահատման պլանի մշակման նպատակն է բարձրացնել Քաղաքականության շրջանակներում ԳՊ–ով նախատեսված ծրագրերի ու նախաձեռնությունների իրականացման արդյունավետվությունը և դրանց արդյունքների տեսանելիությունը ու ազդեցությունը: Յուրաքանչյուր տարվա ԳՊ–ի համար համատեղ մշակվում և հաստատվում է ԳՊ–ի մոնիթորինգի և գնահատման պլանը:

ԳՊ–ով նախանշված ծրագրերի արդյունավետության ապահովման և կանխատեսելի ռիսկերի վաղ բացահայտման ու կանխարգելման նպատակով ենթադրվում է իրականացնել մոնիթորինգ և գնահատում հետևյալ մակարդակներում՝

1) Առանձին գործողությունների և դրանց նպատակային արդյունքների մոնիթորինգ,
2) Միջոցառումների գործողությունների իրականացման վերաբերյալ և արդյունքի ընթացիկ գնահատումներ,
3) Քաղաքականության իրականացման և արդյունքի գնահատում:

Մոնիթորինգի և գնահատման նպատակին հասնելու համար ԳՊ –ի յուրաքանչյուր տողի համար մշակվել են ցուցանիշներ/ցուցիչներ, տեղեկատվության հավաքագրման մեթոդներ, ինչպես նաև սահմանվել է յուրաքանչյուր ցուցանիշի ելակետային և թիրախ արժեքները:

Քաղաքականության համապարփակ գնահատում անհրաժեշտ է իրականացնել երկու անգամ՝ միջնաժամկետ և վերջնաժամկետ: Գնահատման ընթացքում Քաղաքականության արդյունավետությունը անհրաժեշտ է գնահատել ստորև չափանիշներով՝

1) Տվյալ ժամանակամիջոցում Քաղաքականության իրատեսական լինելը կամ համապատասխանությունը երիտասարդների արդի կարիքներին ու կենսական պահաջներին
2) Քաղաքականության ազդեցությունը
3) Քաղաքականության արդյունքների կայունությունը

Քաղաքականության հանրայնացում և հաղորդակցություն.

Քաղաքականության և նրա ԳՊ –ի հանրայնացման, լայն տեսանելիության աճի համար Գավառի համայնքապետարանը կիրառում է հետևյալ հնարավորությունները և հարթակները.

1) Գավառ խոշորացված համայնքի պաշտոնական կայք էջ (https://gavarihamayngapetaran.am/Pages/Home/Default.aspx):

2) Գեղարքունիքի մարզի այլ կայք էջեր:

3) Էլեկտրոնային լրատվամիջոցներ, ՀՀ ԿԳՄՍ նախարարության երիտասարդական պորտալ՝ erit.am, տեղական հեռուստատեսություն, Facebook սոցիալական ցանցում համայնքապետարանի և այլ գործընկերների պաշտոնական էջեր:

4) Մարզային, համայնքային հանդիպումներ, ֆորումներ, աշխատանքային հանդիպումներ:

Քաղաքականության և ԳՊ–ի հանրայնացման ու լայն տեսանելիության աճի հիմնական թիրախ խմբերն են՝

1) Գավառ համայնքի բոլոր բնակավայրերի երիտասարդները, երիտասարդական աշխատողները, ոչ ֆորմալ խմբերի ներկայացուցիչները, կամավորները, ոլորտում ուսումնասիրություններ իրականացնողները և փորձագետները, երիտասարդների հարցերով ու երիտասարդության ոլորտով հետաքրքրված քաղաքացիներ, կրթական հաստատություններ և այլ դերակատարներ:

2) Երիտասարդության ոլորտում աշխատող հասարակական կազմակերպությունները, այդ ոլորտում ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունները կամ նրան տեղական ներկայացուցչությունները, մասնաճյուղերը:

<u>Երրորդ բաժին.</u>

Քաղաքականության իրականացման 2025 թ.–ի գործողությունների պլանը (ԳՊ).

Գավառ համայնքի երիտասարդության կարիքների վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծությունը կարևոր քայլ է երիտասարդական ոլորտի զարգացման Քաղաքականության ԳՊ–ի մշակման գործում:

Գավառ համայնքում երիտասարդական ոլորտի զարգացմանն ուղղված ԳՊ–ի նպատակն է կարիքահենու գործնական քայլերի, հասցեական միջամտությունների, նախաձեռնությունների և միջոցառումների միջոցով ներգրավվել, հզորացնել և աջակցել տեղի երիտասարդներին իրենց կյանքի տարբեր բնագավառներում՝ ապահովելով նրանց համակողմանի զարգացումը և ակտիվ մասնակցությունը համայնքաշինությանը:

ԳՊ–ը կենտրոնանում է սոցիալականացման, ինքնահիրացման, ներգրավվածության և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծման վրա՝ միաժամանակ նպաստելով ազգային անվտանգությանը, սոցիալ-տնտեսական առաջընթացին և մշակութային կենսունակությանը: Ի վերջո, ԳՊ–ը ձգտում է ձևավորել և զարգացնել օրինապաշտ անհատներ, ովքեր հասարակության պատասխանատու անդամներ են և պետականամետ քաղաքացիներ:

Երիտասարդների կարիքների վերհանման, գերակայությունների ձևակերպման ու սահմանման, ինչպես նաև ԳՊ–ի համար փաստական հենք են հանդիսացել համայնքում անցկացված առցանց հարցման արդյունքների վերլուծությունը, ինչպես նաև համայնքի հասարակական կազմակերպությունների, ոչ ֆորմալ խմբերի ու երիտասարդների հետ տարբեր ոլորտներում բարելավման միջամտությունների ու միջոցառումների վերաբերյալ դեմ առ դեմ ձևաչափով ֆոկուս խմբային հանդիպման, ինչպես նաև համայնքի երիտասարդության առաջնահերթ խնդիրներն ու կարիքները առավել ճշգրիտ բացահայտելու համար հրավիրված բազմակողմ խորհրդակցության արդյունքները, որպեսզի ստեղծվի ավելի կենտրոնացված զարգացման ԳՊ, որը կարտացոլի Գավառ համայնքի և նրա երիտասարդության առանձնահատկությունները և կարիքները:

Քաղաքականությունը կազմված է 6 ընդհանուր ուղղություններից և դրանց նպատակներից, և ԳՊ–ի իրականացման համապատասխան ոլորտներից: 2025 թ. ԳՊ–ը ներկայացված է որպես Քաղաքականության հավելված, որում մանրամասն ներկայացված է առաջադրված նպատակներին հասնելուն ուղղված միջոցառումները, ժամկետակացույցը, պատասխանատու և համագործակցող կառույցների, իրականացման ժամկետների և ֆինանսավորման եղանակների ու ռեսուրսների նկարագրերը, մշտադիտարկման և գնահատման չափորոշիչներն ու ցուցիչները, հանրահռչակման և հաղորդակցության ուղիները (կցված է որպես ՀԱՎԵԼՎԱԾ 1):

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 1.

Գավառ համայնքի երիտասարդների անձնական և մասնագիտական աճի ապահովում:

Արդի երիտասարդի համար կենսական է նրա կարողությունների և հմտությունների շարունակական զարգացումը և գործնական կիրառումը, քանի որ այդ գործընթացը նրան դարձնում է ավելի ինքնավստահ, ինքնուրույն որոշում կայացնող և տարբեր իրավիճակներում լուծումներ առաջարկող: Անձնական ու մասնագիտական աճը կարևոր է հատկապես փոփոխվող աշխատաշուկայում արագ կողմնորոշվելու և համակերպվելու, ինչպես նաև կենսագործունեության տարբեր ոլորտներում հմտությունները արագ կիրառելու կամ դրանք նոր պայմաններին փոխակերպելու համար:

Նպատակը. Նպաստել երիտասարդների մասնագիտական ու անձնական աճի, հասարակական դերի բարձրացմանն ու բազմակողմանի և առողջ զարգացմանը՝ կրթական, երիտասարդական փոխկապակցման, ներառական ծրագրերի ու քաղաքացիական ներգրավվման նախաձեռնությունների միջոցով:

Այս նպատակին ձգտելու համար ԳՊ–ով նախատեսվում են միջոցառումներ հետևյալ ոլորտում.

«Կրթություն եվ հմտությունների զարգացում: Թվային գրագիտություն» ոլորտում պետք է երիտասարդներին հնարավորություն ընձեռվի օգտվելու որակյալ կրթության (ֆորմալ և ոչ ֆորմալ) և հմտությունների զարգացման ծրագրերից՝ ապահովելով, որ նրանք հագեցած են անձնական և մասնագիտական աճի համար անհրաժեշտ գիտելիքներով և հմտություններով: Ապահովել, որ երիտասարդները հասանելի լինեն թվային ռեսուրսներին, համակարգչային գրագիտության ծրագրերին և ինտերնետ կապին՝ օգնելով նրանց մնալ կապի մեջ և տեղեկացված, քայլեր ձեռնարկել մեդիագրագիտության բարձրացման ու ապատեղեկատվության դեմ պայքարի ոլորտներում:

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 2.

Երիտասարդների զբաղվածության ու ձեռնարկատիրական գործունեության խթանում:

Համայնքում երիտասարդների զբաղվածությանը վերաբերող առաջնային խնդիրը, որը հաստատվել է համայնքում իրականացված բազմաթիվ հետազոտությունների արդյունքում, կրթական համակարգի և աշխատաշուկայի կապի խզվածությունն է: Երիտասարդների զբաղվածության և նրանց մասնագիտական կրթության և գործազրկության միջև ևս առկա է ուղիղ կապ: Այսինքն՝ մասնագիտական կրթությունը նպաստում է զբաղվածության ապահովմանը, սակայն չի երաշխավորում այն:

Նպատակը. Օժանդակել երիտասարդների ստեղծագործական, ձեռնարկատիրական ու այլ կենսական ունակությունների ձեռքբերմանը և կիրառմանը՝ հիմնվելով առաջնային կարիքների վրա:

Այս նպատակին ձգտելու համար ԳՊ–ով նախատեսվում են միջոցառումներ հետևյալ ոլորտում.

«Զբաղվածություն եվ ձեռներեցություն». Այն պետք է կենտրոնանա երիտասարդների համար զբաղվածության և ձեռներեցության ուղիների ստեղծման վրա, առաջարկելով ռեսուրսներ և աջակցություն աշխատանքի տեղավորման, մասնագիտական ուսուցման և ստարտափ նախաձեռնությունների համար:

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 3.

Երիտասարդների քաղաքացիական գիտակցության բարձրացում և ձայնի արժևորում, ներգրավվածության ու իմաստալից մասնակցայնության խթանում որոշումների կայացման տարբեր մակարդակներում:

Համայնքում ժողովրդավարական համախմբման ճանապարհին առանցքային խնդիր է տեղական մակարդակներում որոշումների կայացման գործընթացում լայն հանրության, այդ թվում՝ երիտասարդության լիարժեք մասնակցության ապահովումը: Այս ոլորտում մասնակցության տեսանկյունից խնդիրներն առաջնահերթաբար դրսևորվում են մասնակցային ժողովրդավարության մասին գիտելիքների պակասով, մասնակցության մեխանիզմների և ընթացակարգերի մասին ոչ լիարժեք իրազեկվածությամբ և քաղաքացիական գիտակցության բարձրացման հրամայականով: Ակտիվ քաղաքացիության դրսևորման հիմքում ընկած է համապատասխան գիտելիքների, կարողությունների, հմտությունների և վերաբերմունքի ձևավորումը:

Նպատակը. Նպաստել համայնքի երիտասարդների ժողովրդավարական ու քաղաքացիական գիտակցության ձևավորմանը, կարևորել և խրախուսել նրանց ձայնը մասնակցային որոշումների ընդունման բոլոր փուլերում:

Այս նպատակին ձգտելու համար ԳՊ–ով նախատեսվում են միջոցառումներ հետևյալ ոլորտում.

«Քաղաքացիական ներգրավվածություն». Խրախուսել երիտասարդների ակտիվ մասնակցությունը համայնքային որոշումների կայացման գործընթացներին՝ հնարավորություն տալով նրանց բարձրաձայնել իրենց կարծիքը, նպաստել տեղական քաղաքականությանը և ներգրավվել կամավորական և քաղաքացիական գործունեության մեջ:

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 4

Երիտասարդների աջակցության խթանում, կամավորության և ոչ ֆորմալ կրթությամբ զարգացման հնարավորությունների ընդլայնում:

Հանրային գործընթացներում մասնակցության մշակույթի խթանման և զարգացման համար մեծ նշանակություն ունի կամավորությունը կամ կամավորական աշխատանքը: Վերջին տարիների արցախյան դեպքերի հետ կապված կամավորության արտահայտման բազում օրինակներ են եղել՝ սկսած երկրի պաշտպանության համար անձնվիրաբար կամավորագրված մարտիկներից, մինչև թիկունքում կազմակերպչական և հումանիտար աշխատանքներում ներգրավված երիտասարդներ: Սակայն գրեթե նույնչափ կարևոր է նաև խաղաղ պայմաններում քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության գործընթացներում երիտասարդների ներգրավվածությունը: Անհրաժեշտ գիտելիքները, արտակարգ իրավիճակներում գործելու իմացությունը լուրջ նախադրյալներ են անվտանգ միջավայր ստեղծելու և ապրելու համար:

<u>Նպատակը.</u> Նպաստել երիտասարդների շրջանում կամավորական մշակույթի սերմանմանը ու տարածմանը ու ներդնել ոչ ֆորմալ կրթական ուսուցման մոդելներ՝ համագործակցելով երիտասարդական կազմակերպությունների հետ:

Այս նպատակին ձգտելու համար ԳՊ–ով նախատեսվում են միջոցառումներ հետևյալ ոլորտում.

«Երիտասարդների աջակցություն եվ կամավորություն». ունենալ արտակարգ իրավիճակներում և ոչ միայն, երիտասարդների կամավորական աշխատանքի, համայնքին բնորոշ, որոշակի ուղղությունների վերաբերյալ կազմակերպական ուղեցույց, որը կօգնի արտակարգ ու այլ իրավիճակներում անհրաժեշտ աշխատանքների կազմակերպման դեպքում կամավորների ներգրավմանն ու աշխատանքների համակարգմանը: Համայնքում գործող երիտասարդական կառույցները պետք է լինեն ոչ ֆորմալ կրթական մեթոդներով ու գործիքակազմերով ուսուցման ջատագովները, իսկ համայնքապետարանը կրթության այդ ոլորտի զարգացման գործում աջակցողի դեր պետք է ստանձնի:

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 5.

Առողջ, մաքուր և բարեկեցիկ միջավայրի ապահովում՝ երիտասարդների առողջ ապրելակերպի, հոգևոր–մշակութային, սոցիալական ու այլ կարիքների ապահովման համար:

Հույժ կարևոր է երիտասարդների համար այնպիսի միջավայրի ապահովումը, որում նրանք կզգան ա վտանգ, զերծ վնասակար սովորույթներից, կգիտակցեն շրջապատող միջավայրի հանդեպ հոգատար վերաբերմունք դրսևորելու գործոնը, մարդկային արժեքների տարածման կարևորությունը:

<u>Նպատակը.</u> Խթանել երիտասարդների շրջանում հոգևոր–մշակութային, առողջ ապրելակերպին հետևելու և այլ արժեքների սերմանումն ու պահպանումը:

Այս նպատակին ձգտելու համար ԳՊ–ով նախատեսվում են միջոցառումներ հետևյալ ոլորտում.

«Մշակութային–հոգեվոր եվ ժամանցային գործունեություն, բնապահպանական իրազեկում». Աջակցություն ցուցաբերել մշակութային, հոգևոր և ակտիվ հանգստի միջոցառումներին և

ծրագրերին, որոնք բավարարում են երիտասարդության տարբեր հետաքրքրությունները, խթանում ստեղծագործական ունակությունները և պատկանելության զգացումը, շրջակա միջավայրի հանդեպ ուշադրության և պատշաչ վերաբերմունքի ձևավորմանը, ինչպես նաև առողջ ապրելու կարևորությունը:

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 6.

Միջազգային համագործակցություն երիտասարդության ոլորտում:

Երիտասարդական ոլորտում միջազգային համագործակցությունը դրսևորվել է ինչպես միջպետական հարաբերություններում երիտասարդական ոլորտում համագործակցության հաստատմամբ՝ երկկողմ և բազմակողմ ձևաչափերով, այնպես էլ միջազգային միջպետական և ոչ կառավարական կազմակերպությունների և տարբեր երկրների միջազգային զարգացման գործակալությունների կողմից՝ Հայաստանում երիտասարդական ոլորտում ծրագրերի ֆինանսավորմամբ և իրականացմամբ: Միջազգային համագործակցության առումով առկա են բազմաթիվ երկկողմ և բազմակողմ ձևաչափերով համագործակցության հաջողված օրինակներ, որոնք ունեն շարունակական զարգացման և ընդլայնման մեծ ներուժ:

Նպատակը. Նպաստել համայնքային, մարզային, հանրապետական և միջազգային ասպարեզներում ու հարթակներում երիտասարդների համագործակցությանը, միջմշակութային երկխոսությունը խթանող նախագծերին և նախաձեռնություններին :

Այս նպատակին ձգտելու համար ԳՊ–ով նախատեսվում են միջոցառումներ հետևյալ ոլորտում.

«Միջազգային համագործակցություն և միջմշակութային երկխոսություն». տարբեր հարթակների միջոցով համայնքի երիտասարդների ծանոթացում այլ մշակույթների, փորձի փոխանակում և համատեղ ծրագրերի իրականացում՝ երիտասարդների միջև փոխկապակցման ցանցերի ստեղծման ու համայնքի համար դրական փոփոխություններ բերելու համար:

Գործողությունների պլանը հանդիսանում է նաև որպես «ճանապարհային քարտեզ» վերոնշյալ ոլորտներում քայլեր ձեռնարկելու և դրական փոփոխություններ արձանագրելու համար: ձգտելու համար.

Գործողությունների պլանի շահառուներն են.

Երիտասարդ՝ 13–ից 35 տարեկան Հայաստանի Հանրապետության քաղաքացի, Հայաստանի Հանրապետությանքաղաքացիություն չունեցող և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող անձ (սահմանման աղբյուրը՝ «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագիծ):

Աշակերտական, ուսանողական, երիտասարդական խորհուրդ՝ կրթական հաստատության, տեղական ինքնակառավարման կառուցվածքում խորհրդատվական կամ որոշումների կայացմանը մասնակցող մարմին, որը, համաձայն իր կանոնադրության, ապահովում է երիտասարդների

ինստիտուցիոնալ մասնակցությունը տվյալ մարմնի գործունեության շրջանակներում որոշումների կայացման գործընթացներին:

Երիտասարդական աշխատող՝ երիտասարդների հետ աշխատող մասնագետ, ով իրականացնում է երիտասարդական աշխատանք, այն է՝ կրթական, մշակութային, բնապահպանական կամ սոցիալական այլ նշանակության խմբային կամ անհատական աշխատանք երիտասարդների համար, նրանց հետ և/կամ նրանց կողմից հիմնված ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանության և երիտասարդների կամավոր մասնակցության վրա: Երիտասարդական աշխատանքն իր բնույթով երիտասարդների ներուժի բացահայտմանը, իրացմանը, հանրային կյանքի տարբեր ոլորտներում և մակարդակներում կայացվող որոշումներին ակտիվ մասնակցությանը և ներառմանը միտված սոցիալական գործունեություն է:

Երիտասարդական նախաձեռնող եվ ոչ ֆորմալ խմբեր՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող, երիտասարդների կողմից ինքնակազմակերպված և որոշակի ժամկետում գործունեություն իրականացնող երիտասարդների խումբ:

երիտասարդական քաղաքացիական հասարակության կազմակերպություն՝ ՀՀ օրենսդրությամբ գրանցված քաղաքացիական հասարակության կառույց, որը զբաղվում է երիտասարդության հարցերով և/կամ իրականացնում է երիտասարդական աշխատանք՝ համաձայն իր կանոնադրության և սահմանած նպատակների ու խնդիրների:

Երիտասարդական կենտրոն՝ ստեղծարար միջավայր, որում իրականացվում է երիտասարդական աշխատանք՝ ուղղված երիտասարդների ներուժի բացահայտմանը, սոցիալականացման, ինքնաիրացման, ներգրավման ու զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, հանրային կյանքին և պետականաշինությանը երիտասարդության առավելագույն մասնակցության ապահովմանը:

Իրականացնելով այս գործողությունների պլանը՝ համայնքը նպատակ ունի խթանել մի միջավայր, որտեղ երիտասարդները կարող են բարգավաճել, նպաստել համայնքի զարգացմանը և դառնալ պատասխանատու և ներգրավված քաղաքացիներ՝ ապահովելով ավելի պայծառ ապագա ինչպես երիտասարդության, այնպես էլ համայնքի համար՝ որպես մի ընդհանուր ամբողջություն:

Գավառ համայնքի երիտասարդական քաղաքականության գործողությունների պլանը բխում Քաղաքականության առաջնահերթություններից, մշակվել է բազմակողմ հանդիպումների և քննարկումների, ինչպես նաև հարցումների արդյունքների ու առաջարկությունների հիման վրա ու նախատեսված է մեկ տարվա՝ 2025 թ.–ին իրականացնելու համար (ԳՊ–ի ՀԱՎԵԼՎԱԾ 1):